ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԵՐ

Աղջիկն ասում է.

Մեր տիւռնը ճռճռում ա—ա՛ տղայ դու մի կա՛լ-կա՛լ.
Մեր շունը հըչմաչում ա—ա՛ տղայ դու մի կա՛լ-կա՛լ.
Մեր որձակը ծկլթում ա—ա՛ տղայ դու մի կա՛լ-կա՛լ.
Մեր խոխերքը լցմացում են—ա՛ տղայ դու մի կա՛լ-կա՛լ.
Մեր ճրաքը տրզվզում ա—ա՛ տղայ դու մի կա՛լ-կա՛լ.
Մեր կրակը թսվսում ա—ա՛ տղայ դու մի կա՛լ-կա՛լ.
Մեր պառաւը մրրթմրթում ա—ա՛ տղայ դու մի կա՛լ-կա՛լ.
Մեր հալիւորը տընքտընքում ա—ա՛ տղայ դու մի կա՛լ-կա՛լ։

Տղան պատասխանում է.

Ձեր տիւռնը ճռճռում ա—մին ջամ ջրով կեա՛մ-կեա՛մ.
Ձեր շունը հըչմաչում ա—մին ճոթ հացով կեա՛մ-կեա՛մ.
Ձեր որձակը ծկլթում ա—մին հափուռ կոտով կեա՛մ-կեա՛մ.
Ձեր խոխերքը լըցմացում են—մին ջուբ չամչով կեա՛մ-կեա՛մ.
Ձեր ճրրաքը տրզվրզում ա—մին բժուրիկ նոթով կեա՛մ-կեա՛մ,
Ձեր կրակը թսվսում ա—մին բեռը փայտով կեա՛մ-կեա՛մ.
Ձեր պառաւը մրթմրթում ա—մին հաց մեղրով կեա՛մ-կեա՛մ.
Ձեր հալիւորը տընքտընքում ա—մին կոլա գինով կեա՛մ-կեա՛մ։

Պարձեալ աղջիկը

Մեր ձիանքը խըրխնջում են—ա՛ տղայ դու մի կա՛լ-կա՛լ.
Մեր եզիքը պռմռանչում են—ա՛ տղայ դու մի կա՛լ-կա՛լ.
Մեր կովերը մրկմրկում են—ա՛ տղայ դու մի կա՛լ-կա՛լ.
Մեր որթերը կրմկրմում են—ա՛ տղայ դու մի կա՛լ-կա՛լ.
Մեր գումաշները դրուլընկում են—ա՛ տղայ դու մի կա՛լ-կա՛լ.
Մեր իշերը զրռզրռում են—ա՛ տղայ դու մի կա՛լ-կա՛լ.
Մեր նանին ճրղճղում ա—ա՛ տղայ դու մի կա՛լ-կա՛լ.
Մեր աղբերը կռվռում ա—ա՛ տղայ դու մի կա՛լ-կա՛լ։

Տղան վերջը էլի ասում է, յաղթում եւ տուն մտնում.

Ձեր ձիանքը խրխընջում են—մին խուրում եօնջաւ կեամ-կեամ.
Ձեր եզինքը պրռմռանչում են-մին ճուվարան տարմանով կեամ-կեամ.
Ձեր կովերը մրկմրկում են—մին խուրում խօտով կեամ-կեամ.
Ձեր որթերը կրմկրմում են—մին քթիչ կաթնով կեամ-կեամ.
Ձեր գումաշները տրռլընկում են—մին խուրցը փօքաւ կեամ-կեամ.
Ձեր իշերը զրռզրռում են—մին կուշ կարով կեամ-կեամ.
Ձեր նանին ճրղճրղում ա—մին շամախի քթկալով կեամ-կեամ.
Ձեր աղբէրը կրռվրռում ա—մին մղայի փափաղով կեամ-կեամ։

ՎԻՃԱԿԻ ԵՐԳԵՐ։

Անում ես հա անում,
Էս ինչ դարտեր ա ջանում.
Ես իմ մեռնելի դարտս քաշում չեմ,
Կը մնայ մաղբուն անում։
Կիւթանը հանդին լարած,
Մըշկնին միջին շարած,
Մըղափուն դուք ա մըշկրնի,
Սև հողին գերի դառած։
Կալին հատիկը թի կրտամ,
Կեօկ ձիուն գարի կրտամ։
Հու որ ասի էն եարը կեամ ա,
Վորթը տակին մէր կրտամ։
Հալեմ, հալեմ հրրցրնեմ,
Ճրաքն ածեմ գրցրնեմ,
Բաքվից եկողներ, ձեզ մատաղ,
Կացէք իմ եարից հարցանեմ։
Դուրս կը կամ Լաստին կալը,
Կը երևայ Բաքվայ սարը,
Ջանս քեզ մատաղ խազէյին,
Ուղարկի իմ բալայ եարը։
Ջաղացին դուռնը տաշած,
Եաղլախին վարդը քաշած,
Աղբէր կէռ ունքերիդ մատաղ,
Դասիդ ղալամով քաշած։
Ջաղացին դուռնը փոս ա,
Քար կը քցեմ կը խօսայ.
Ջանս քեզ մատաղ լինի,
Իմ նանուս ազիզ փեսայ։
Սարին խօտը հատալ ա,
Գիւմշինին նստոտալ ա.
Ջալում գենջեցի աղջիկ,
Քաքուլդ թգօտալ ա։
Կիւլպայ կանեմ խաշար ա,
Թրխաձս եարիս պաշար ա,
Փանահ խան քո մարը մեռնի,
Իմ եարը խէ մաշել ա։
Վրրթեվերս թային ա
Զորս ղոլը չոր փէյին ա
Ճրագը ձեռին տղայ,
Սրտամէջդ խային ա։
Տեղ կը քցեմ փոթ կը կայ,
Մէջիցը անուշ հոտ կը կայ,
Մինչև էն եարին կալը՝
Աչքերիս հունց քօն կը կայ։
Ա՛յ հափը կաս, հափը կաս,
Մեծ դազանի քափը կաս.
Թէ ինձ օգես ետ վազես,
Ձիանը դուս տափը կաս։

Աղջի անունը՝ Խանի,
Լեչակդ քամին տանի,
Ես քեզ նշանած պիտի
Զորերդ իմ ձեռքով հանի։
Սարիցը մարդ ա կալիս,
Սարերը կրակ ա տալիս,
Առաջիս եաղլուխ բացաւ,
Իմացայ թէ ինձ վարդ ա տալիս։
Սօնամս շարմաղ ա քինում,
Դիլին դարմաղ ա քինում,
Ձային մահանայ կալած՝
Ծարին կէօրմաղ (տես) ա քինում։
Էն եարին եարը ես եմ,
Բաղին բլբուլը ես եմ,
Էն եարը խէ տարտ անի,
Սրտին սիրած գիւլը ես եմ։
Ա՜յ տղայ, տաւարած տղայ,
Զօռաւ ճարած տղայ,
Օթախս սրփեմ շոր քցեմ,
Նատիր, բեգարած տղայ։
Կաքաւը սուլուլ կը տայ,
Գլուխը տուրուր կը տայ,
Հուր որ մին եար չունի՝
Ունքերը ուրուր կը տայ։
Արևը թըռվըռաւ ելաւ,
Իմ նանի կռվաւ ելաւ,
Սապաբին աչքը դուրս գայ,
Դուշմանի սրտաւ ելաւ։
Ա՜յ ուրմա, ուրմա եար,
Քեաքուլդ բուրմայ եար,
Քնացել ես արանը եկալ,
Ամակդ լիքը խուրմայ եար։
Ես Գօրիսին ձորան եմ,
Մեծ բաղին խնձորան եմ,
Խնձորը կծեմ թող անեմ,
Մէջին հարսը կոլ անեմ։
Կէտին տակին լուաց կանեմ,
Սիպտակ երես բաց կանեմ,
Սրտիս սիրած չաւ տղին՝
Աչքով ունքով իմաց կանեմ։
Եարայ, եարայ սիրտս,
Տանիցս ավարայ սիրտս,
Ճաքել չեմ, պատառել չեմ,
Քանց քարա պինտ ա սիրտս։
Ղողկը տուաւ էն պատին,
Մէջքը կոտրի էն տատին,
Հարուստը ուզեց տուաւ ոչ,
Պահեց տուաւ աղքատին։
Օրաւ եկ հա՛ օրաւ եկ,
Ջուրդ լիքը մօրաւ եկ,
Էս թաղս ղմըղալ ա,
Ջուռ տուր էն ղօլաւ եկ։
Մաւ հալաւս փռփռում ա,
Սոված փորըս ղռղռում ա,
Տաշտը դարտակ, մաղը կախ,
Փորը սոված, թուրը կախ։
Ծարաւալ եմ ջուր չկայ,
Սարերին աղբիւր չկայ.
Վախում եմ ղարիբ մեռնիմ՝
Քշտիս մէր ու քուր չկայ։
Ծարաւալ եմ ջուր բերէք,
Երևանու բան բերէք,
Վախում եմ ղարիբ մեռնիմ՝
Ղարիբ ղուշս տուն բերէք։
Աշըղին սազը առայ,
Գիւլերին փասը առայ,
Հինգ աղբօր մէջիցը՝
Ջոկեցի խասն առայ։
Արէքակը մըրըմէր,
Հալալ ըրէք հըր ու մէր,
Եկալ ա որ տանում ա,
Ընկեր միջայ հանում ա։
Տանս տակին խօնկի ծառ,
Ոսկի կաքաւ վերան թառ,
Էս կիրակի մոհլաթ տուր,
Էն կիրակի հոգիս առ։
Դարուազին տակը սառալ ա,
Մատներս ղալամ դարալ ա։

Թոխ եախաւոր, բոզ չուխաւոր
Օշս խելքս տարալ ա։
Եկէք գնանք Ծեր անենք,
Խնձոր կծենք թոզ անենք,
Հուր որ մին եար չունի՝
Գլխին թխենք դէն անենք։
Գեանջու քամին կալիս է,
Դրռները թրրրխկալիս է,
Հարիւր թիւման մըշտըլըղ,
Սիմօն եարը կալիս է։
Վրրթիվերիս վադան ա,
Միջի մարդին կադան ա,
Միջի մարդը հունց անի,
Խնձորկեցի կադան ա։
Վրրթիվերը եկաւ անցաւ,
Աղջկերքը ընկան ծաղկանցաւ,
Ոլխը սև սպիտակ տղայ
Վրրթիվերրս առաւ անցաւ։